

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ապրանքի ծագման փեղանուններ

Գրանցման համարը	12.1
Հայտի համար	2014007
Հայտի ներկայացման թվականը	25.12.2014
Ծագման երկիրը	AM
Հրատարկվող տեղանունը	ՍԵՎԱՆԻ ԻՇԽԱՆ
ԱԾՄԴ-ի դասը	29

Ապրանքի տեսակը կամ կոնկրետ ապրանքը ձուկ և ձկնամթերք

Ապրանքի հատուկ որակի նկարագրությունը՝

Սևանի իշխանը (*Salmo ischchan*, Kessler 1877) հանդիսանում է լճի համար էնդեմիկ տեսակ, որը գրանցված է Հայաստանի կարմիր գրքում (2011): Իշխանի չորս ռասաներից երկուսը՝ ձմեռային իշխանը և բոջակը, համարվում են իսպառ վերացած, գեղարքունի և ամառային իշխանը կորցրել են արդյունագործական նշանակությունը և հանդիպում են առանձնյակներով: Ստերջ իշխանը բնորոշող և արտաքինից աչքի ընկնող հատկանիշը գույնն է: Ընդհանուր արծաթափայլ ֆոնի վրա առատորեն ցրված են սև, բավական խոշոր, կլոր խայտեր, որոնք հաճախ զարդարում են նաև մեջքի լողաթաղանթը և խոիկային կափարիչները: Երբեմն հանդիպում են իշխաններ, որոնց մաշկի վրա լինում են նաև ալ-կարմիր կամ նարնջագույն խայտեր: Վերջիններս, սակայն, մեծ մասամբ ավելի փոքր են, քան սևերը, սակավաթիվ: Կարմիր խայտերը սովորաբար ավելի հաճախ են հանդիպում փոքր իշխանների մոտ:

Սևանի իշխանի չորս ռասաները միմյանցից տարբերվում են ձևաբանական (կողագծի թեփուկների քանակ, խոիկային առէջների ելունների քանակ և ձև, վերին և ստորին ծնոտների կառուցվածք) և էկոլոգիական (ծվադրման ժամկետներով և տեղով) որոշ ցուցանիշներով:

Կապն աշխարհագրական ծագման հետ՝

Սևանա լիճն իր ֆիզիկական, քիմիական, կենսաբանական ցուցանիշներով համարվում է քաղցրահամ ջրի ռազմավարական պաշար: Այն բացառիկ քաղցրահամ լճերից է, որում աղերի ցածր քանակի շնորհիվ ստեղծվում են պայմաններ յուրահատուկ ձկնատեսակի աճի համար: Քաղցրահամ ջրերում աճող ձկան միսը ավելի նուրբ է լինում, քան ծովի ջրում աճող ձկան միսը, և ի տարբերություն արհեստական ջրամբարներում աճեցվածների՝ անհրաժեշտ միկրոտարրերով ավելի հագեցած: Սևանա լճի ջրում առկա քիմիական տարրերի (ընդհանուր իոններ, միկրոտարրեր, ֆտոր, ֆոսֆոր, կալցիում, կալիում, նատրիում, սուլֆատ, սիլիցիում և այլն) համակցությունը նպաստում է ջրում յուրահատուկ պայմանների ստեղծմանը, որում աճում է Սևանի իշխան ձկնատեսակը: Ձկան աճի վրա դրական ազդեցություն է թողնում նաև լճում առկա մագնեզիումի բարձր ցուցանիշը: Սևանի ավազանի կլիման ամռանը չափավոր տաք է, իսկ ձմռանը՝ չափավոր ցուրտ: Տարեկան կտրվածքով լճի միջին ջերմաստիճանը տատանվում է 10-12°C: Ջրի մինիմալ ջերմաստիճանը 1-2°C է, որը նկատվում է հունվար-ապրիլ ամիսներին, իսկ առավելագույնը՝ օգոստոսին, մինչև 21°C: Լճում ջրի տարբեր շերտերի խառնվելը՝ պայմանավորված ինչպես ջրի տարբեր շերտերի ջերմաստիճանային տարբերություններով, այնպես էլ տվյալ տեղանքին բնորոշ քամիներով, նույնպես հանդիսանում է Սևանա լճի բնորոշ հատկանիշը: Լճի վերը նշված առանձնահատկություններն անդրադառնում են տվյալ համակարգում բնակվող իշխանի՝ գեղարքունի և ամառային իշխանի, որակների վրա:

Աշխարհագրական գոտին՝ Սևանի իշխանի արտադրությունը իրականացվում է Գեղարքունիքի մարզի «Սևան» ազգային պարկ» -ի տարածքում: Պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին, կազմում է 147.343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22.585 հա: Պահպանական գոտու տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ (ընդհանուր տարածքը՝ 7464 հա), արգելավայրեր (ընդհանուր տարածքը՝ 2652 հա), ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոց՝ «Նորաշենի», «Լիճք-Արգիշի», «Գիլի» և «Արտանիշի», 2 արգելավայրեր՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային»: Պարկի ռեկրեացիոն գոտիների ընդհանուր տարածքը կազմում է 4753 հա, որոնք առանձին հատվածներով տարածվում են լճի ափի երկայնքով: Պարկի տարածքը ներառում է թվով 8 ռեկրեացիոն գոտիներ: Տնտեսական գոտու տարածքներն ընկած են հետևյալ հատվածներում՝ Սևան քաղաքից Ծովագյուղ, Լճաշենից Հայրավաձ, Նորատուս թերակղզուց Ծակքար գետ, Արգիշի գետից Ծովակ գյուղ և Գեղամասար գետից Արտանիշ թերակղզի, ինչպես նաև Արեգունու հարավ-արևմտյան լեռնալանջերի վրա: Այս հատվածներում տնտեսական գոտու ընդհանուր մակերեսը կազմում է 11.184 հա:

Իրավասու մարմինների կամ կազմակերպությունների անվանումներն ու գտնվելու վայրը, որոնք իրավասու են հսկելու տեխնիկական հատկորոշումների պահպանությունը, ինչպես նաև դրանց խնդիրների ճշտումը՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն: